CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամուլի հաղորդագրություն

29. 06. 2020 թ.

ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը պատասխանում է երեխաների հարցերին

Հայաստանի Հանրապետության նախագահ **Արմեն Սարգսյանը հունիսի 30-ին՝ ժամը 19:30**, «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (**ՔՈԱՖ**) ինստագրամյան **«*INSTALIVE*»** զրուցաշարի հյուրն է:

Նախագահի հետ ՔՈԱՖ-ի ինստագրամյան ուղիղ եթերում կզրուցի Արմավիրի մարզի Քարակերտ գյուղից ՔՈԱՖ-ի շրջանավարտ Խանում Գևորգյանը:

Իր բացման խոսքում նախագահն անդրադառնալու է գիտելիքի կարևորությանը, տեխնոլոգիաներին, գյուղատնտեսությանն ու այսօրվա երիտասարդների առջև բացվող հնարավորություններին:

Նախագահ Արմեն Սարգսյանին հարցեր են ուղղելու ՔՈԱՖ-ի **շահառու համայնքների երեխաները**: Նրանց հետաքրքրությունների շրջանակում են մասնագիտական և աշխատանքային ձեռքբերումները, դիվանագիտական կեցվածքի առանձնահատկությունները, Հայաստանում և այլ երկրներում ապրելու տարբերությունները, ընտանիքի և հատկապես թոռնիկների հետ հարաբերությունները:

ՔՈԱՖ-ի INSTALIVE կոչվող առցանց հանդիպումների շարքը զրույց է հետաքրքիր ու տարբեր ոլորտներում հաջողության հասած հյուրերի հետ արվեստի, առողջության, բիզնեսի, մեդիայի, քաղաքականության, սպորտի մասին:

coaf.org
coaf@coaf.org
+374 10 502076